

ելուն, թէեւ անոր քախտն արդէն իսկ վճռուած կրնայ ըստիւ: Յուլ. 31ին Օրանմի մնացեալ բանակին մեծ մասը (ըըր 5000 հոգի զօրավար Պրինսլոյի հետ) անձնատուր եղաւ Անգղիացւոց, միակ ճարպիկ Դէ-Վէտկըցափախիչի թրանսփախ: Սեպտ. ամսոյ սկիզբը հինգօրեայ ճակատամարտ մը տրուեցաւ Մախադդորպի քով, ուր Բուլլէր որ միացած էր Ռոբերդսի ի վերջոց ստիպեց զԲոլմա նահանջել: Ճակատէն ետքը թրանսփախ անգղիական թագին հպատակ հրատարակուեցաւ: Կրիզէր բողոքեց, բայց երբ Անգղիացիք առին նաեւ Լիտնէրուզն ու Բաբերտըն եւ ըննեցին վերջին երկաթուղոյ գիծն, որ փորթուգական Ափրիկէ կը տանէր, ստիպուեցաւ Կրիզէր գերի չիյնալու համար՝ չուն փախչիլ ապաստանիլ Սեպտ. 11ին, իրեն հետեւեցան իբր 3000 Բուրեր, զորոնք զինաթափ ըրին Փորթուգալցիք:

Ճննառատակն իրերը շատ փոխուեցան երկու ամսուան մէջ: Գերմանիոյ Կայսրը յաջողեցաւ զկոմս Վալդէրսէ անուանել տալ ընդհանուր հրամանատար միացեալ պետութեանց: Բայց ճամբայ անգամ չելած՝ Դաշնակիցք պէտք եղած զորք տեսնաւ Օգ. 1ին ելլելով Տիէնցիէն ղէպ ի Պէկինգ: Երկու տեղ միայն բուռն ընդդիմութիւն եղաւ (Օգ. 6 եւ 7ին) Պայցանգի եւ Նագզունի քով, ուր եւրոպական Դաշնակիցք շատ մեծ կորուստներ ունեցան, բայց Ճենացիք ի վերջոյ նահանջել ստիպուեցան: Օգ. 15ին հասան Դաշնակիցք Պէկինգ եւ Դեսպանք ազատեցան: Ճենական արքունիքն ի Սիանֆու փախած էր, որ պետութեան մայրաքաղաք հրատարակուեցաւ: Անկէ ետքը բանակցութիւնք սկսան ըլլալ, Ճենաց լիազօրն ըլլալով հանրածանօթ Լի-Հունգ-Չանգ եւ իշխանն Չինգ, որ պաշտպան եղած էր Դեսպանաց: Բայց իրերը տակաւին չփոխ են, եւ պատերազմական գործողութիւնք ալ կը շարունակուին: Ռուսիա, որուն Արտաքին գործոց Նախարար անուանեցաւ կոմս Լամուդորֆ, առաջարկեց պարպել Պէկինգ եւ Դեսպաններուն հետ քաջուիլ Տիէնցին բանակցութիւնքն սկսելու: Գերմանիա ընդդիմացաւ այս առաջարկին, իւր կողմանէ առաջարկելով բաւական խիստ պայմաններ՝ բանակցութիւնք սկսելէն յառաջ:

Վերջին առաջարկս ալ մերժեցին Միացեալ Նահանգք, որ այժմ ինքնագլուխ գործելու կը սկսին: Ռուսիա ալ ետ չէ առած իւր ծրագիրն, եւ արդէն բանակին մաս մը թողուցած է Պէկինգը: Իրաց այս վիճակին մէջ կը հասնի Վալտերսէ այս օրերս ի Թակու եւ միացեալ պետութիւններու բանակներուն վերին կառավարութիւնը կը ստանձնէ: Գերմանական թերթերը կը յուսան թէ Վալդէրսէի իւր պաշտօնին զլուին անցնելով ալ վերջապէս ծայրագոյն արեւելք տիրող տարտամ ու շփոթ դրութիւնը պիտի պարզի ու կերպաւորի՝ ամիսներէ հետէ ամբողջ աշխարհի մտադրութիւն գրաւելէ ետքը:



ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՆՅՈՒՄՆԱԿԱՆ — Թղթակցութիւն Արգարտ եւ Հրիստոսի ըստ Նորագիտ արձանագրութեան Եփեսոսի. 267:

ՄԱՏՆՆԱԿԱՆ — Նկատողութիւններ Փատատոսի պատմութեան վերաբերեալ. 270:

ԳՐԱԿԱՆ — Վէճից Սեքստիայ. 279:

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆ — Բառամանկ ախտի հետեւանքներ. 284:

ՀԱՆՈՍՈՒՄՆԱԿԱՆ — Ուսումնական ուղեւորութիւն Քէլք եւ Լէման գիտնականաց. 287:

ԱԶԳԱԿԱՆ — Պատմական ակումբ եւ մտտի-ապաշտութիւն. 294:

ԼԵՂՈՒՄՆԱԿԱՆ — Արաքիկի գաւառաբարքառը. 295:

ՊԵՏՄԱԿԱՆ — Եղիսաբեթուպոլսոյ քաղաքային շէքքին կարգադրութիւններ — Դաշնադրութիւն — պարտաթղթեր — կտակ. 303:

ՄԱՏՆՆԱԿԱՆ — Գէորգայ Պիսիգեայ վեցօրեայ. 308:

ԱՅԼԵՒԵԼՔ

ՆՈՐ ՀՐԱՅՄԱՆԿՈՒԹԻՒՆ. 316:

ԳՐԱԿԱՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ 319:



ՀՐԱՅՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՆԿԱՆ

Կ. ԲԱՓԱՆԵԼ Կ. ՊԵՐՈՆՅ

ՎԻԵՆՆԱ, ՄԻԻԲԱՐԵՆԱ ՅԳԵՐԱՆ